ԳԱՀԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԳԱԳԻԿ I-Ի ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ

Ռ. Ի. ՄԱՔԵԼՈՅԱՆ

Բագրատունյաց արքունիքը Գագիկ I-ի երեսնամյա կառավարման ընթացքում՝ 990—1020 թթ., հատուկ ուշադրություն դարձրեց պետության ամրապնդմանն ու կենտրոնացմանը։ Նրան հաջողվեց ճնշել իշխանական անհնազանդության դրսևորումները և համախմբել հայ ազնվականությանը Շիրակի ֆեոդալական տան շուրջը[1]։ Հայաստանի հարավում և հյուսիս-արևելքում գոյություն ունեցող Արծրունյաց և Սյունյաց թագավորությունները այդ շրջանում սերտ կապված էին Բագրատունի հայրց շահնշահի հետ, Գագիկի կին Կատրամիդեն Սյունյաց Վասակ թագավորի դուստրն էր[2], իսկ քույրը՝ Խուշուշը, Սենեքերիմ Արծրունու կինը[3]։

Կյանքի վերջում Դավիթն իրագործեց մի կարևոր միջոցառում, որը կոչված էր կարգավորելու ժառանգության հարցը և ապահովելու թագավորական իշխանության կայունությունը իր հաջորդի օրոք։ Խնդրի հաջող լուծման համար նա հետևեց հոր օրինակին։ Մի քանի տասնամյակ առաջ Դագիկի հայր Աշոտ Ողորմածը (953—977) իր իշխանության օրոք լուծեց երեք որդիների՝ Սմբատի, Գուրգենի և Գագիկի ժառանգության հարցը։ Թագաժառանգ Սմբատին դարձրեց գահակից, իսկ մյուսների իշխանության բաժինը որոշեց յուրաքանչյուրի տիրույթների շրջանակներում։

Իրենից հետո ավագ որդին (Սմբատը) ժառանգելու էր գահը և շահնշահի իրավունքները, Գուրգենը մնալու էր թագավոր Տաշիր-Զորոփորում[4], իսկ Գագիկի բաժնեմասն էր Դեղարքունիքը և Շիրակի մի հատվածը։

Դրանով իսկ Աշոտը նախապես հաստատեց «արքունի տան գահերեցներից» յուրաքանչյուրի տեղը պետական կառավարման սիստեմում և Բագրատունիների տոհմական ներքին աստիճանակարգում իր հետնորդի՝ Սմբատի թագավորության օրոք։ Այդպիսի կարգը հնարավորություն տվեց խուսափել գահակալական անցանկալի վեճերից և բախումներից. Անանուն ժամանակագրի խոսքերով արքայորդիները «համակամ սիրով»[5] լուծեցին գերագույն իշխանության հարցը և չվիճարկեցին Սմբատի թագավորական իրավունքը։

Մատենագիրների հաղորդումներից կարելի է եզրակացնել, որ նույն ձևով էր ձգտում կարգավորել գահաժառանգության հարցը նաև Գագիկը։ Այդ մասին Վարդան պատմագիրը վկայում է. «... մեռաւ Գագիկ, տուեալ զթագա-

---

1 Բ. Առաքելյան, Բագրատունյաց թագավորության հետագա զորեղացումը, տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Երևան, 1976, էջ 138—139։

2. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊբ, 1887, էջ 256։

3 Ն. Մարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 257։ Գ. Արվանձտյանց, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 14։

4 Հ. Մաթևոսյան, Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 1, էջ 76—78։

5 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դարերից», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. II, Երևան, 1956, էջ 501։

թորութիւնն երից որդւոց իւրոց, Յովհանիսի, Աբասայ և Աշոտոյ։ Զթագն տայ Յովհանիսի, և զԱնի, և զՇիրակ, զսուրբ Գրիգոր Զորովն Աշոցաց, զԱնբերդ և զդաշտն Այրարատեան, զԿայեան և զԿայծոն և զՏաւուշ գաւառն Սեւորդեաց. և այլ մնացեալսն՝ Աշոտի և Աբասայ բաժանէ... և նստի (Աշոտը—Ռ. Մ.) թագաւոր Դրուց աշխարհին. և Աբաս ի Կարս»[6]։

Պատմիչի խոսքերը չպետք է հասկանալ այն իմաստով, թե Գագիկը Հայոց թագավորությունը բաժանում էր երեք որդիների միջև. այն գահակալը, որը 30 տարիների ընթացքում պայքարել էր պետության կենտրոնացման համար մի հարվածով չէր կործանի ձեռք բերած արդյունքը։ Պատմիչը, մեր կարծիքով, մատնանշում է, որ շահնշահը կյանքի վերջում զբաղվել է իր հետնորդների ժառանգության հարցով և նախապես որոշել յուրաքանչյուրին հասանելիք տիրույթն ու նրանով պայմանավորված քաղաքական իշխանությունը պետության ներսում, որին նրանք տեր կպառնային ապագայում՝ իր մահից հետո։

Որդիներից յուրաքանչյուրի իշխանությունը տարածվելու էր որոշակի մարզերում։ Դրանք այն մարզերն էին, որոնք դեռ Գագիկի օրոք նրա որդիների իրավասության տակ էին՝ անձնական տիրույթներ և գավառներ, որտեղ շահնշահի որդիները, որպես արքունիքի ներկայացուցիչներ, կարող էին ունենալ վարչական իշխանություն։ Ըստ այնմ Գագիկը նախապես որոշում էր, թե իրենից հետո որդիներից յուրաքանչյուրը պետության որ երկրամասում է իշխելու և ինչ իրավասությամբ. ավագ որդի Հովհաննես-Սմբատը ճանաչվեց թագաժառանգ, նրա իրավասության տակ էին Վարդան պատմիչի նշած գավառները։ Հոր մահից հետո նա էր գլխավորելու Հայոց թագավորությունը, նստավայր ունենալով Անի մայրաքաղաքը։ Մյուս եղբոր՝ Աշոտի հողաբաժինը պատմիչները անվանում են «Դրուց աշխարհ»[7], իսկ Արիստակես Լաստիվերտցին լրացնում է, որ Աշոտի բաժինն էր «զներքին կողմն աշխարհին՝ որ հայի ի վերայ Պարսից և Վրաց»[8]։ Այդ գավառները, որոնք սահմանակից էին Պարսկաստանին և Վրաստանին, ըստ վերը բացատրածի, Աշոտի կառավարչության տակ էին դեռ հոր իշխանության օրոք։

«Դրուց աշխարհի» մի մասում Աշոտը պետք է իշխեր որպես «տեր» (իշխան, սենյոր) և ենթարկվեր ավագ եղբորը որպես Հայոց թագավորի և գերագույն սյուզերենի։ Այսպիսով, Գագիկը Աշոտ Ողորմածի նման նախապես որոշել էր որդիներից յուրաքանչյուրի դիրքը պետության ներսում իրեն հաջորդող թագավորի օրոք, դրանով նա հետամուտ էր լինում կանխելու հնարավոր գահակալական պայքարը ժառանգների միջև։

Բայց այս անգամ իշխանության հարցը «համակամ սիրով» չլուծվեց։ Ուռհայեցին և մյուս պատմիչները հաղորդում են, որ Հովհաննեսի և Աշոտի միջև առաջ եկավ «հակառակություն»։ Աշոտը, օգնական զորք ստանալով Վասպուրականի թագավոր Սենեքերիմից, պաշարեց և «նեղեց Անի քաղաքը»[9]։ Եղբայրներին հաշտեցնելու համար միջամտեցին Բագրատունի և Պահլավունի իշխաններն ու Պետրոս կաթողիկոսը։ Նրանց միջնորդության շնորհիվ վիճող

---

6 «Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 92։

7 Վարդան, էջ 92։ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 10։ «Սմբատայ սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 6։

8 «Արիստակիսի Լաստիվերտցւոյ Պատմութիւն», Երևան, 1963, էջ 27։

9 Մատթեոս Ուռհայեցի, էջ 7—8։ Սմբատ, էջ 5։ Արիստակես Լաստիվերտցի, էջ 26—27։

կողմերը համաձայնության եկան պայմանով, որ Հովհաննես-Սմբատին մնա Անին շրջակա գավառներով (հիմնականում Շիրակը), իսկ Աշոտը ճանաչվեց «թագավոր Դրուց աշխարհի», բացի այդ, եղբոր մահից հետո նա կստանար Հովհաննեսի բաժինը և Անի քաղաքը. «Եւ յայնժամ սուրբ հայրապետն Պետրոս և իշխանքն ամենայն ելին առ Աշոտ և մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, և Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի. և եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն տանն Հայոց։ Եւ յայնժամ եղեւ խաղաղութիւն ամենայն աշխարհին Հայոց»[10]։

Հայոց թագավոր Հովհաննես-Սմբատի և նրա եղբոր միջև կայացած համաձայնությունը և վերջինիս թագավորական իրավունքների ճանաչումը Հայաստանի որոշ մարզերի վրա հայ պատմագիտության մեջ դիտվում է որպես Բագրատունյաց թագավորության բաժանում Գագիկի որդիների միջև և նրա մասնատում երկու մասի[11]։ Նման բացատրությունը մեր կարծիքով վիճելի է և վերանայման կարիք ունի։ Նախ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հանգամանքի վրա։ Կաթողիկոսը և իշխանները «երդումով» ճանաչել էին Աշոտի իրավունքները ոչ միայն «Դրուց աշխարհում», այլ նաև Անիի գահի վրա, որպես «թագավոր ամենայն տանն Հայոց»։ Տվյալ դեպքում սկզբունքային նշանակություն չունի, որ այդ իրավունքը կապված էր որոշ վերապահումների հետ, նրա իրականացումը լոկ ժամանակի հարց էր, Աշոտը պետք է պարզապես համբերեր մինչև եղբոր մահը, որից հետո նա հաստատվելու էր Անիում, և նրա իշխանության տակ միավորվելու էին երկուսի բաժինները։ Չնայած Աշոտը այդպես էլ չտիրացավ Անիին իր վաղաժամ մահվան պատճառով[12], բայց դա ոչ մի նշանակություն չունի։ Նրա դին նույնիսկ տեղափոխեցին Անի և թաղեցին «ի տապանատունն առաջին թագաւորացն Հայոց»[13]։

Նշված հանգամանքները հիմք են տալիս մեզ վերանայել ընդունված տեսակետը և այլ բացատրություն տալ Գագիկ I-ի հետնորդների գահակալական պայքարին։ Մեր կարծիքով Հովհաննես—Աշոտ պայքարի գլխավոր նպատակը վերջինիս համար ոչ թե «Դրուց աշխարհի» թագավորական իշխանությունն էր, որտեղ նա մինչ այդ արդեն իշխում էր որպես «տեր» (սենյոր), այլ նրա իրավունքների ճանաչումն էր որպես հայոց թագավորի ժառանգի։ Բագրատունյաց թագի և «շահնշահի» տիտղոսի ժառանգության իրավունքը

---

10 Մատթեոս Ուռհայեցի, էջ 10։ Նաև՝ Սմբատ, էջ 6։ Արիստակես Լաստիվերտցի, էջ 27։

11 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, տե՛ս «Երկերի ժողովածու», հատ. 2, Երևան, 1967, էջ 648։ Հ. Հարությունյան, Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959, էջ 251—253։ Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հատ. 2, Երևան, 1965, էջ 59։ Որոշ հեղինակներ բառացի չեն գրում թագավորության բաժանման մասին, այլ նշում են Աշոտ IV-ի թագավորությունը «Դրուց աշխարհում» (տե՛ս Մ. Չամչյան, Հայոց պատմութիւն, հատ. 2, Վենետիկ, 1785, էջ 838։ Ն. Դուրյան, Ազգային պատմություն, Երուսաղեմ, 1934, էջ 370—371։ Հ. Բարթիկյան, Բագրատունյաց թագավորության հիմնադրումը, տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 144—145)։

12 Արիստակես Լաստիվերտցի, էջ 55։ Մատթեոս Ուռհայեցի, էջ 79։

13 Մատթեոս Ուռհայեցի, էջ 79։ Սմբատ, էջ 33։

Հովհաննեսի շառավիղից, որի ներկայացուցիչն էր վերջինիս Աշոտ (Երկաթ) անունով որդին[14], անցնում էր Աշոտ IV-ին և նրա հետնորդներին։

Այդ իրավունքով 1042 թ., Հովհաննեսի մահից հետո թագավոր է օծվում «ի վերայ ամենայն տանն Հայոց»[15] Աշոտ IV-ի որդին՝ Գագիկ II-ը (1042—1045)։

Այսպիսով, «Դրուց աշխարհում» Աշոտ IV-ի թագավորական իշխանության ճանաչումով Հայաստանում հաստատվեց երկիշխանություն, որը տևեց մինչև 1040 թ.՝ Աշոտի մահը։ Դա նշանակում է, որ Հայոց թագավորությունը 1020—1040 թթ. ունեցել է երկու թագավոր, ֆեոդալական հիերարխիայի գլուխ կանգնած են եղել երկու գերագույն սյուզերեններ։ Այդ մասին ուղղակի վկայում է Սմբատ սպարապետը (էջ 6)՝ Կարսի Աբաս և Տաշիր-Զորափորի Գուրգեն (պետք է լինի Դավիթ Անհողին) թագավորները իշխում էին Աշոտի և Հովհաննեսի հրամանով և «կային ի հնազանդութեան երկուց թագաւորացն Յովհաննիսի և Աշոտոյ»։

Առաջնությունը, այնուամենայնիվ, տրվել է Հովհաննեսին, քանզի վերջինս իր ավագության շնորհիվ ժառանգել էր հոր թագը, դրա հետ միասին շահնշահի տիտղոսը և ճանաչվել Բագրատունյաց ազգապետ[16]։ Աշոտ IV-ը, դառնալով «Դրուց աշխարհի» թագավոր, նույնպես ճանաչվեց «Թագաւոր ամենայն տանն Հայոց», բայց չկարողանալով տիրել Անիին, չստացավ շահնշահի պատիվը։ Բացառված չէ, որ նրա այցը Բաղդադ, խալիֆի մոտ[17], հետապնդում էր հենց այդ նպատակը՝ ճանաչվել շահնշահ և խլել առաջնությունը եղբորից։

Անիի շուրջը ծավալված պայքարը ցույց է տալիս, թե որքան էր մեծացել Աշոտ Ողորմածի գահանիստ կենտրոնի դերը Հայաստանի քաղաքական կյանքում։ Աշոտի հաջորդներից ոչ մեկը մայրաքաղաքը այլևս չտեղափոխեց իր սեփական տիրույթների դդյակը, ինչպես այդ անում էին Հայոց թագավորները սկսած Աշոտ I-ից մինչև Աբասը ներառյալ (IX դարի վերջ—X դարի կեսեր)[18]։

Ուշագրավ է, որ Հովհաննես-Սմբատի դեմ պայքարող Աշոտ IV-ը նույնպես ամեն կերպ ձգտում էր տիրանալ Անիին։ Նույնիսկ ճանաչվելով թագավոր, Աշոտը փորձեց խորամանկությամբ հասնել իր նպատակին։ Նա հիվանդ ձևացրեց իրեն և հրավիրեց եղբորը Թալին (հավանաբար իր նստավայրը), որտեղ դերեվարեց և հանձնարարեց իր վասալ իշխաններից Ապիրատին սպանել Հովհաննեսին։ Ապիրատը չկատարեց սյուզերենի հրամանը և ազատ արձակեց շահնշահին[19]։

Այնուհանդերձ Աշոտը մասնակիորեն հասավ իր նպատակին, ստիպելով հայ ազնվականությանը և կաթողիկոսին ճանաչել իրեն Անիի ժառանգորդ։

---

14 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց. Անթիլիաս, 1951, էջ 121—122։ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 518։ Նույնի՝ Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 171։ Արիստակես Լաստիվերտցի, էջ 32։

15 Մատթեոս Ուռհայեցի, էջ 86—87։ Սմբատ, էջ 36—37։ Արիստակես Լաստիվերտցի, էջ 58։

16 Մատթեոս Ուռհայեցի, էջ 44, 84։ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 20, 31, 83, 136, 171։

17 Մատթեոս Ուռհայեցի, էջ 8։ Սմբատ, էջ 5։

18 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 5, էջ 92—94։

19 «Միխիթարյան Անեցւոյ Պատմութիւն», ՍՊբ, 1879, էջ 52։ Վարդան, էջ 97։

Այս դրվագում ակնհայտորեն դրսևորված է Աշոտի ներքին քաղաքական գիծը՝ Բագրատունյաց գահին և «շահնշահի» տիտղոսին հասնելու համար ինչ գնով էլ լինի, նա պետք է գրավեր Անին։ Եթե նկատի ունենանք, որ IX—XI դդ. քաղաքները հանդիսանում էին առանձին ֆեոդալական իշխանությունների կենտրոններ[20], ապա շատ ուշագրավ է այն փաստը, որ Աշոտ III-ից հետո իշխող Հայոց թագավորների (Սմբատ II, Գագիկ I, և Հովհաննես-Սմբատ) նստավայրերը ոչ թե նրանց ֆեոդալական տիրույթների կենտրոններում էին, այլ Անիում։ Կարելի է վստահորեն ասել, որ Աշոտ III-ի թագավորության տարիներից Անին դարձել էր համահայկական գահանիստ կենտրոն-մայրաքաղաք։

Վերջում ցանկանում ենք մի քանի խոսքով անդրադառնալ Գագիկի հետնորդների դահակալական պայքարի դրդապատճառներին։ Աշոտի հավակնությունները միայն իշխանամոլությամբ բացատրել չի կարելի։ Պատճառները շատ ավելի լուրջ էին և խորը։ Ցավոք, սկզբնաղբյուրները սեղմ են խոսում մեզ հետաքրքրող դեպքերի մասին. այնուամենայնիվ նրանց հակիրճ խոսքերում կա մի ակնարկ, որը հետևությունների առիթ է տալիս։ Լաստիվերտցին Գագիկի որդիների մասին գրում է. «Պայազատեն զիշխանութիւնն որդիք նորա Սմբատ՝ զոր Յովհաննէս կոչէին, և Աշոտ նորին հարազատ»[21]։

Պատմիչի այս խոսքը հիմք է տալիս ենթադրելու, որ Գագիկ շահնշահը, օգտելով կարգավորել թագավորական իշխանության ժառանգական կարգը և բաշխել որդիների միջև յուրաքանչյուրի ֆունկցիաներն իր հաջորդի օրոք, որոշակի իրավունքներ է վերապահել երկրորդ որդուն։ Վերջինս հոր օրոք անկասկած ազդեցիկ դիրք էր գրավում արքունիքում և բացառված չէ, որ մասնակից լիներ երկրի կառավարմանը, նրա վարչական իշխանության տակ թերևս գտնվեին այն մարզերը, որոնք բիչ ավելի ուշ կազմեցին «Դրուց աշխարհը»։

Իշխանության «պայազատումը» եղբայրների կողմից նշանակում է, որ Հովհաննեսի օրոք Աշոտը առաջվա պես մնում էր կառավարման մասնակից շահնշահ Հովհաննեսի դերագույն իշխանության ներքո։ Այս եզրակացությունը հաստատվում է նաև գահաժառանգության կարգի մասին Վարդանի վկայությամբ։ Սակայն Աշոտը դժգոհ մնաց իրեն հասած բաժնեմասից և փորձեց խլել գահը եղբորից։ Նա հաշվի էր առնում Հովհաննեսի թուլությունը որպես պետության ղեկավարի, որն այն ժամանակվա պայմաններում պետք է լիներ քաջ զորավար, անձամբ առաջնորդեր բանակը (ինչպիսիր էին Բագրատունի բոլոր նախորդ թագավորները սկսած Աշոտ I-ից մինչև Գագիկ I-ը)։ Բայց Հովհաննեսը, ըստ պատմիչների շատ հեռու էր ռազմական գործից։ Նա «իմաստուն էր և հանճարեղ», բայց «մարմնով տարտամ և թուլամորթ պա-

20 Ռ. Առաքելյան, Քաղաքների դերն ու նշանակությունը երկրի հասարակական-տնտեսական կյանքում, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 246։

21 Աբբասակես Լաստիվերտցի, էջ 26։ Ուշադրություն մոտ հանդիպում ենք հետևյալ ուշագրավ վկայությանը. «Բռնակալեաց Յովհաննէս զաթոռ թագաւորութեանն Հայոց. և Աշոտ շրջէր զօրօքն և աւար հարկանէր զբազում տեղիս և նեղէր զքաղաքն Անի» (տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 8։ Սմբատ, էջ 5)։ Դուցե այս տողերում պատմիչը ակնարկում է, որ Հովհաննեսը ձգտել է իրեն ենթարկել նաև եղբոր իրավասության տակ գտնվող մարզերը և զրկել նրան իշխանությունից։

տերազմում», իսկ Աշոտը հակառակը՝ «արի էր և քաջասիրտ, հաղթող պատերազմներում»[22]։

Երբ Աշոտը հարձակվեց Անիի վրա, Հովհաննեսը նույնիսկ չմասնակցեց սարտերին. այդ մասին Ուռհայեցին գրում է. «Եվ իբրև լուաւ Յովհաննէս զգալն Աշոտոյ եղբօրն իւրոյ, հրամայեաց փող պատերազմի հարկանել, և ինքն ի գահոյսն անշարժ նստեալ կայր, վասն զի անհմուտ էր պատերազմի»[23]։ Նշված կարևոր չափանիշով Աշոտը բացահայտորեն գերազանցում էր եղբորը և ձգտում էր հեռացնել թույլ գահակալին։ Ըստ երևույթին նրա դիրքը արքունիքում և ֆեոդալական միջավայրում որոշակի նախադրյալներ էին ստեղծում իր ձգտումն իրագործելու համար։ Աշոտի մեծ հեղինակությունը երկրում հաստատվում է ֆեոդալական ավագանու և կաթողիկոսի հանդուրժողական վերաբերմունքով՝ նրա հավակնությունների հանդեպ։ Աշոտի կողմնակիցներն էին «Դրուց աշխարհի» իշխանները և որոշ խոշոր ֆեոդալներ, ինչպիսին էր, օրինակ, Սենեքերիմ Արծրունին, բայց ըստ երևույթին կողմերի ուժերը մոտավորապես հավասար էին և երկուսն էլ ընդունեցին ավագանու հաշտարար միջնորդությունը։ Ավագանին աշխատեց հաշտեցնել եղբայրներին, իհարկե, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ուժերի ռեալ հարաբերակցությունը և այդ բանն արվեց շատ նրբանկատ ու հմտորեն։

Իհարկե, Աշոտը կգերադասեր գահին և շահնշահի պատվին տիրանալ անմիջապես, բայց զգաց, որ ներկա պահին չի կարող ավելին ձեռք բերել։ Նրան խանգարեց ֆեոդալական ավագանու և ազատների հակադիր մասի դիմադրությունը։ Խոշոր ավատատերերի թվում կային նաև Հովհաննեսի կողմնակիցները՝ նրա հետ վասալական հարաբերություններով կապված ֆեոդալներ։ Նրանք չէին հանդուրժի իրենց սյուզերենի տապալումը, որովհետև այդ դեպքում կկորցնեին գիրքը արքունիքում, պաշտոնները և այլ արտոնություններ, ուստի պաշտպանեցին Հովհաննեսին և դրա հետևանքով առաջ եկավ «հակառակությունը»՝ ներֆեոդալական պայքարը, որին վերջ տվեց կաթողիկոսի և ավագանու չեզոք մասի միջնորդությունը, որին միացել էր Գեորգի I վիրա-աբխազաց թագավորը։ Հովհաննեսը, իր հերթին, ակամա ընդունեց հաշտության պայմանը, որովհետև այլ բան չէր կարող անել, դրա շնորհիվ նա գոնե ցկյանս պահպանեց գահը։

Գագիկի այս երկու հետնորդներից, ինչպես վերը նշվեց, ավելի գերադասելի էր Աշոտը, որը պատմիչների վկայությամբ ավելի համապատասխանում էր ժամանակի պահանջներին, ավելի գործունյա էր, վճռական և քաջ ռազմիկ՝ պաշտպանեց իր «աշխարհը» հարևան մահմեդական ամիրաներից[24]։ Նա մեծ ազդեցություն ուներ երկրում. Լաստիվերտցին ասում է, որ նա «զբրանայ քան զամենեսեան, որ յառաջ քան զնա էին. մինչ զի բազումք ի մեծամեծացն՝ զհայրենի տեղիս իւրեանց ի նա թողեալ, նմա զանձինս կամօք ի հնազանդութիւն ետուն»[25]։ Աշոտը կարողացավ ստիպել ֆեոդալական ավագանուն ընդառաջելու իր գահակալական հավակնություններին։

---

22 Մատթեոս Ուռհայեցի, էջ 7, 8։ Արիստակես Լաստիվերտցի, էջ 26, 27։

23 Մատթեոս Ուռհայեցի, էջ 8։

24 Արիստակես Լաստիվերտցի, էջ 27—28։

25 Նույն տեղում, էջ 28։

МЕЖДОУСОБНАЯ БОРЬБА ПРИ ПРЕЕМНИКАХ ГАГИКА I

Р. Н. МАТЕВОСЯН

(Резюме)

Гагику I Багратуни (990—1020) наследовал его старший сын Ованес-Смбат, однако брат последнего Ашот выступил с притязаниями на отцовский престол. Спор был улажен при посредничестве феодальной знати, и Ованес остался царем Армении с резиденцией в Ани, Ашот же был признан царем территории, называемой в источниках «Друц ашхар»'ом. Следствием признания прав Ашота, по нашему мнению, было не разделение Багратидского царства на две части, как принято считать в армянской историографии, а временное двоевластие, которое длилось до воцарения Гагика II, объединившего в 1042 г. владения обоих правителей.